Էրդողանը կողմ է ՌԴ-ի և ԻԻՀ-ի ակտիվացմանը Սիրիայում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 26.10.2024 թ.[1]

12.10.2024 թ. Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանը Ռուսաստանին և Իրանին կոչ է արել վերջ դնել Սիրիայի գլխին կախված իսրայելական սպառնալիքին: «*Ծայր աստիճան կարևոր է, որպեսզի Ռուսաստանը, Իրանը և Սիրիան ավելի արդյունավետ միջոցներ ընդունեն այդ իրավիճակում, որն առավել քան մեծ սպառնալիք է ներկայացնում ՍԱՀ-ի տարածքային ամբողջականությանը*», – հայտարարել է Էրդողանը, ընդգծելով, որ տեսնում է, թե ինչպես են Ռուսաստանը և Իրանը համատեղ գործում Սիրիայում: Թուրք առաջնորդի այս կոչը հնչել է այն բանից հետո, երբ իսրայելական օդուժը 10.10.2024 թ. գրոհել էր Իրանի *SABA* մեքենաշինական գործարանը սիրիական Հասիե արդյունաբերական քաղաքում: Ավելի վաղ՝ 08.10.2024 թ. ՑԱՀԱԼ-ը հարված էր հասցրել Դամասկոսի կենտրոնի մի բազմահարկ շենքի, ինչի արդյունքում խաղաղ բնակիչներ էին զոհվել:

Թուրքիայի առաջնորդի կոչը Սիրիայի տարածքային ամբողջականությունը պաշտպանելու մասին մի փոքր տարօրինակ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ պահի դրությամբ հատկապես Թուրքիան է այն միակ երկիրը, որը բռնազավթման գործողություն է իրականացրել Սիրիայի դեմ: Անկարան փորձում է օրինականացնել իր զորքերի ներխուժումն արաբական հանրապետության հյուսիսային սահմանամերձ շրջաններ՝ վկայակոչելով այնտեղ գործող Ռոջավայի և ՔԲԿ-ի (PKK) «*քուրդ ահաբեկիչների*» դեմ բուֆերային գոտի ստեղծելու անհրաժեշտությունը:

Իսրայելը չի հայտարարել Սիրիա ներխուժելու իր ծրագրերի մասին և առայժմ բավարարվում է դրա տարածքին հրթիռա-հրետանային հարվածներ հասցնելով: Բայց, հավանաբար, Անկարան վախենում է, որ ՑԱՀԱԼ-ը Լիբանանում «Հյուսիսի նետերը» ռազմագործողության շրջանակներում կարող է ավելի առաջ՝ դեպի Սիրիայի խորքը մղել Գոլանի բարձունքների ուղղության իր դիրքերը, փաստարկելով, թե անհրաժեշտ է ստեղծել բուֆերային գոտի, որը կչեզոքացնի «Հեզբոլլահի» սիրիական մասնաճյուղի հարձակումներն իսրայելական տարածքի վրա:

Հազիվ թե Թուրքիային ձեռնտու է զարգացումների նման սցենարը Թել Ավիվի սանձազերծած պատերազմում, սակայն, հաշվի առնելով սիրիական տարածքների բռնազավթման սեփական փորձը, Էրդողանի վարչախմբի համար այդ դեպքում ծայրաստիճան դժվար կլինի վիճարկել իսրայելական գործողությունների օրինականությունը: Ուստի Էրդողանը, ըստ երևույթին, փորձում է Մոսկվայի և Թեհրանի ջանքերի հաշվին փակել Թել Ավիվի «սիրիական» ախորժակը:

Դրա հետ մեկտեղ, հարկ է դիտարկել Թուրքիայի նախագահի հայտարարության շարժառիթների ևս մեկ վարկած: Հնարավոր է՝ նրան դրդում են ոչ այնքան Սիրիայի, որքան

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 18.10.2024 թ.:

որ, ինչքան էլ տարօրինակ լինի, Ադրբեջանի ճակատագրի համար մտավախությունները: Այն սպառնալիքների համապատկերում, որոնք իրանցի քաղաքական գործիչների կողմից հասնում են Բաքու՝ կապված «*հակաիրանական գլոբալ ռազմաճակատին*» Ադրբեջանի ենթադրյալ մասնակցության հետ, այդ մտավախությունները օրեցօր գնալով միայն սաստկանում են: Միջազգային փորձագետներն ավելի հաճախակի են խոսում այն մասին, որ Իսրայելն ու Իրանը աշխարհագրական գործոնների և իրարից հեռու գտնվելու պատճառով լայնածավալ պատերազմի դեպքում չեն սահմանափակվի հրթիռա-հրետանային փոխհրաձգությամբ և կարող են միմյանց ռազմաբազաների և պրոքսի ուժերի դեմ ցամաքային ռազմագործողությունների դիմել երրորդ երկրի տարածքում: Այս համատեքստում առավել հաճախակի հիշատակվում է հատկապես Ադրբեջանը, որի տարածքում Թել Ավիվը ԻԻՀ-ի դեմ տարիներ շարունակ ռազմա-հետախուզական ենթակառուցվածք է ստեղծել: Այն դեպքում, եթե Իրանը որոշակի հանգամանքների զուգադիպությամբ հարված հասցնի բացահայտ իսրայելամետ դիրքորոշման հակված Ալիևի վարչախմբին, Թուրքիան ստիպված պիտի անձամբ միջամտել պատերազմին: Այդ պարագայում անխուսափելի կլինի հակամարտությանը նաև ՌԴ մասնակցությունն Իրանի կողմից:

Ակնհայտ է՝ Անկարայում կանխազգում են, որ Իսրայելը և նրա Արևմտյան դաշնակիցներն այդպիսով իսկ ցանկանում են տարածաշրջանային տերություններին արյունահեղ պատերազմի դրդել «ադրբեջանական թատերաբեմում»: Ուստիև Թուրքիայից Մոսկվա և Թեհրան ազդանշաններ են հղվում՝ Թել Ավիվի հետ դիմակայության ռազմաճակատը նրա սահմաններին մոտ և իր սահմաններից հեռու տեղափոխելու անհրաժեշտության մասին: Հակառակ դեպքում Անկարան ոչ միայն կզրկվի թյուրքական աշխարհի ինտեգրման և Հարավային Կովկասում իր երկարամյա քաղաքականության հաջող արդյունքների հեռանկարից, այլև կկանգնի սեփական անվտանգության և տարածքային ամբողջականության ապահովման հիմնախնդրի առջև: